

**ՀԱՅ ՀԱՍՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ**

Պողոսյան Գևորգ

*ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի Սոցիոլոգիայի բաժնի վարիչ*

Պողոսյան Ռիմա

*Հոգեբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ավագ
գիտաշխատող*

Չորրորդ դարի աստվածաբան, փիլիսոփա Ավրելի Ագուստինը, որը համարվում է պատմության փիլիսոփայության նախահայր, շատ հետաքրքիր դատողություններ է արել պատմության մասին, համարելով, որ այն ուղղագիծ է զարգանում, որոշակի նախագծով¹²։ Նախագիծ, որը մեզ՝ շարքային մարդկանց համար հայտնի չէ, բայց գոյություն ունի, գծագրված է Աստծո կողմից ու տանում է մեզ դեպի Աստված։ Նա մի հայտնի ու հետաքրքիր ասացվածք ունի պատմության մասին։ Նա ասել էր. Չկա անցյալ, չկա ներկա ու չկա ապագա։ Այլ կա միայն ներկայի անցյալը, ներկայի ներկան և ներկայի ապագան։ Այլ կերպ ասած, մեր բոլոր պատկերացումները պատմական անցյալի մասին բոլոր դեպքերում դրանք մեր այսօրվա պատկերացումներն են (անցյալի, կամ ներկայի ու ապագայի մասին)։ Հետևաբար, ներկան փոփոխվում է և նրա հետ փոփոխվում է նաև անցյալի պատկերը։ Ամեն ներկան իր անցյալն է կառուցում, պատկերում ու կերտում։

Ֆրանսիացի սոցիոլոգ և պատմաբան Պյեր Նորան գրում էր, որ պատմական հիշողությունը իհարկե շատ անհատական է, բայց այն իրականանում է սոցիալական շրջանակներում (cards)¹³։ Սոցիալական ներկան անպայման ազդում է, ձևավորում է, սահմանում է պատմա-

¹² Аврелий А. Исповедь блаженного Августина Епископа Иппонийского / Вст. ст. А.А.Столярова. М., 1991. В.В. Соколов. Средневековая философия. М.,1979.

¹³ Франция-память, Нора П. и др., СПб., 1999. с. 20.

կան անցյալի դիմագծերը: Այսպիսով մենք ամեն անգամ վերակերտում ենք մեր անցյալը, ինչ-որ դեպքեր վառ ընդգծում ու առաջ ենք մղում, իսկ ինչ-որ դեպքեր երկրորդ պլան ենք մղում:

Գերմանացի գիտնական Ալեյդա Ասսմանն առանձին գիրք է նվիրել պատմական մոռացության հիմնախնդրին¹⁴: Նա նշում էր, որ գոյություն ունեն ինչպես հիշողության, այդպես էլ մոռացության մեխանիզմներ: Հաճախ օրվա իշխանությունները քաղաքական նկատառումներով մոռացության են հանձնում որոշ պատմական իրադարձություններ: Սա գիտակցված մոռացության դեպք է: Ամեն դեպքում, մեր պատմական անցյալը զգալի չափով պատմական ռեկոնստրուկցիա է, մեկնաբանություն:

Մեր կատարած սոցիոլոգիական հետազոտության¹⁵ շրջանակներում մեզ հետաքրքրում էր այսօրվա մեր հայության պատմական հիշողության խորության և կառուցվածքի մանրամասները, դրանց կապն ու ազդեցությունը ազգային ինքնության վրա: Ինչպես հայտնի է պատմական հիշողությունը (կամ սոցիալական հիշողությունը) անմիջապես ազդեցություն է գործում և որոշակիորեն ձևավորում է ազգային գիտակցությունը, ինքնության կոդերը:

Ե՞րբ են առաջացել հայերը, քանի տարի առաջ (այս և հաջորդ ընդգծումները հեղինակինն են):

Աղյուսակ 1.

Քանի տարի առաջ	Քանակ	%
Մինչև 2000	289	19,3
2000 - 4000	427	28,5
4000 - 6000	405	27,0
6000 - 8000	121	8,1
8000 - 10 000	106	7,1
10 000 - 20 000	84	5,6
20 000 ավելի	67	4,5
Ընդամենը	1 500	100

¹⁴ См. Ассман А. *Забвение истории – одержимость историей*. М.: Изд-во: «Новое литературное обозрение». 2019. с. 552.

¹⁵ Погосян Г. *Историческая память и национальная идентичность*. Ер., Изд-во РАУ, 2023. с. 134.

Տարօրինակ է, որ տարեցներն ավելի շատ են նշել մինչև 2000 տարի պատասխանը, այսինքն մեր դարաշրջանը, Քրիստոսի ծնունդից հետո: Կրթության մակարդակի բարձրացմանը զուգահեռ պատասխաններն ավելի ու ավելի էին համընկնում գիտական պատմագրության մեջ ընդունված տարեթվի հետ:

Հետաքրքիր է, թե ուրիշ ո՞ր հնագույն ազգերի հետ են համեմատվում հայերը: Ո՞վքեր են հայերից ավելի հին ազգեր:

Ձեր կարծիքով, հայե՞րն են ավելի հին ազգ, թե՞... (Մի քանի պատասխան):

Աղյուսակ 2.

№	Հայերից հին են ...	%
1	Հին եգիպտացիները	31,9%
2	Հույները	22,1%
3	Հռոմեացիները	21,3%
4	Հրեաները	17,1%
5	Ասորիները	14,3%
6	Պարսիկները	12,5%
7	Չինացիները	11,1%
8	Հնդիկները	10,0%
9	Այլ	1,0%
10	Ոչ մեկը	29,4%

Փաստորեն մարդկանց 1/3-րդը (29,4%) ուրիշ ոչ մի ազգ չի նշել: Հայերից ավելի հին ազգ չգիտեն, հատկապես մեծահասակները (36,7%): Նաև հետաքրքիր է, որ Լատինամերիկյան հնագույն ազգերին էլ չեն նշել (մեքսիկներ, Պերույի, Բոլիվիայի ազգերը):

Ի՞նչ եք կարծում, հայերը Հայաստանում բնիկ են, թե՞ եկվոր ազգ են:

1. Բնիկ ազգ են - 91,6%;
2. Եկվոր են - 5,6% ;
3. Դժվարացել են պատասխանել - 2,8%:

Այս հարցում, ինչպես տեսնում ենք, բոլորը միակարծիք են: Մեզ հետաքրքրում էր, թե որքա՞ն է եղել պատմական Հայաստանի ամենա-

մեծ տարածքը: Հարցվածների կեսը համարում է, որ այն զբաղեցնում էր երեք ծովերի միջև ընկած տարածությունը:

Ո՞ր թվականին են հայերը քրիստոնեություն ընդունել:

Աղյուսակ 3.

Ընդունման տարին	%
301-310 թ. Մ.թ.ա.	82,1%
Այլ տարեթվեր	6,2%
Դժվարացել են պատասխանել	11,7%
Ընդամենը	100,0%

Հիմնականում ճիշտ պատասխաններ են ստացվել:

Ո՞ր թվականին է ստեղծվել հայոց այբուբենը:

Աղյուսակ 4.

Այբուբենի ստեղծման տարեթիվը	%
405 - 406 թթ.	65,7%
Այլ տարեթվեր	12,4%
Դժվարացել են պատասխանել	21,9%
Ընդամենը	100,0%

Ավելի շատ դժվարացել են այբուբենի ստեղծման տարեթիվը նշել, քան քրիստոնեության ընդունման թվականը: Նաև ավելի շատ են դժվարացել պատասխանել: Ցածր կրթական մակարդակ ունեցողներն ու մեծահասակներն ավելի քիչ են ճիշտ պատասխան տվել: Բայց բոլորը շատ լավ գիտեն հայոց այբուբենի ստեղծողին՝ Մեսրոպ Մաշտոցին 98,7%:

Որքա՞ն է ներկայումս աշխարհում հայ սփյուռքի քանակությունը: Գրեթե երկու երրորդը - (60,6%) համարում են, որ հայերի թիվն աշխարհում կազմում է 8-ից 10-ը միլիոն մարդ:

Ու՞մ են համարում հայոց պատմության ամենամեծ հերոսներին: Մեր նորագույն պատմությունից նշել են միայն 3 անուն՝ Մոնթե Մելքոնյան, Վազգեն Սարգսյան և Արկադի Տեր-Թադևոսյան: Խորը պատմությունից նշել են 8-ը հերոսների անուն - Անդրանիկ Օզանյան, Գա-

րեզին Նժդեհ, Գևորգ Չաուշ, Թաթուլ Կրպեյան, Դրաստամատ Կանա-
յան, Վարդան Մամիկոնյան, Մխիթար Սպարապետ և Տիգրան Մեծ: Ա-
մեն սերունդ ունի իր պատմական հերոսներին: Օրինակ, Մոնթեյին
նշել են 18 - 29 տարեկան երիտասարդների 33,0%, իսկ 70+ մեծահա-
սակների միայն 16,6%: Նույնը վերաբերում է նաև Գարեգին Նժդեհին՝
երիտասարդների 25,1% նշել են նրա անունը, իսկ մեծահասակների
միայն 15,4%: Անդրանիկ Օզանյանի անունը հավասար քանակությամբ
են նշել՝ 23,6% երիտասարդների և 28,4% մեծահասակների: Իսկ, օրի-
նակ, Կարեն Դեմիրճյանին նշել են երիտասարդների միայն 2,7%, բայց
մեծահասակների՝ 12,4%-ը: Մի փոքր տարբերություն կա գյուղի և քա-
ղաքի բնակիչների պատասխանների միջև: Գյուղի բնակիչները ավելի
շատ են նշել Մոնթեյի, Անդրանիկի ու Վազգեն Սարգսյանի անունները,
քան երևանցիները: Պատասխանները տարբերվում էին նաև ըստ
հարցվածների կրթական մակարդակի ու մասնագիտության:

Ովքե՞ր են համարվում մեր պատմության ամենամեծ թագավորները:

Աղյուսակ 5.

Թագավորի անունը	Ընդամենը
Տիգրան Մեծ	71,40%
Պապ թագավոր	18,40%
Աշոտ Երկաթ	14,60%
Արտաշես	11,60%
Տրդատ թագավոր	9,60%
Արգիշտի Ա	8,80%
Արշակ 2-րդ	7,20%
Լևոն Մեծ Ռուբինյան	5,10%
Մենուա թագավոր	4,00%
Աբգար թագավոր	1,00%
Այլ	21,60%

Ինչպես տեսնում ենք, բոլորը նշել են Տիգրան Մեծի անունը: Ինչ-
պես երևում է այստեղ մենք բացահայտել ենք կոլեկտիվ պատմական
հիշողության ինչ-որ բազային շերտի, հիմքային կամ մեկնարկային
հարթության: Փաստորեն մեր ուսումնասիրության մեջ, մենք դիպչել
ենք մի բազիսային, ազգային պատմության հավաքական գիտակցման
հիմնապուրներին:

Որո՞ն է համարվում Հայոց պատմության ամենամեծ հաղթանակը:

Աղյուսակ 6.

№	Պատմական հաղթանակներ	Տոկոս
1	Ղարաբաղի ազատագրումը 1991-1994 թթ.	28,6%
2	Ավարայրի ճակատամարտը	27,2%
3	Սարդարապատի ճակատամարտը	21,4%
4	Շուշիի ազատագրումը	19,7%
5	Հայրենական Մեծ Պատերազմը 1941-1945 թթ.	9,5%
6	Մայիսյան հաղթանակները՝ մայիսի 9 և 28	6,0%
7	Անկախության հռչակագիրը	5,5%
8	Բաշ Ապարանի մարտը	4,8%
9	1-ին, 2-րդ և 3-րդ Հանրապետությունները	4,4%
10	Քրիստոնեության ընդունումը	4,0%
11	Տիգրան Մեծի գահակալության ժամանակը	3,6%
12	Հայոց այբուբենի ստեղծումը	2,2%
13	2018 թ. հեղափոխությունը	1,5%
14	Այլ	12,2%

Առաջին հինգ տողերում հիմնական հաղթանակներն են: Եթե մայիսյան հաղթանակներին ավելացնենք Ղարաբաղի և Շուշիի ազատագրումը, ապա կստանանք 54,6%: Հարցվածների կեսի կարծիքով ամենամեծ հաղթանակները ամենամոտիկ անցյալում արված հաղթանակներն են: Նրանք հետին պլանում են թողել Ավարայրի և Սարդարապատի ճակատամարտերի հաղթանակները, նույնիսկ Երկրորդ համաշխարհային պատերազմը: Հետաքրքիր է, որ ամենամոտիկ անցյալի քաղաքական հեղափոխությունը՝ 2018 թվականը, նշել է հարցվածների միայն 1,5%-ը: Այսպիսով, մեր ուսումնասիրությունների շնորհիվ կարող ենք փաստել, որ ժամանակակից հայ հասարակության պատմական հիշողության խորությունը ընդգրկում է ավելի քան 2 000 տարվա ժամանակաշրջան:

Իսկ որո՞նք են համարվում Հայոց պատմության մեջ ամենամեծ պարտությունները:

Աղյուսակ 7.

№	Պատմական պարտություն	Տոկոս
1	2020 թ. 44-օրյա պատերազմը	74,4%
2	1915 թ. Հայոց Ցեղասպանությունը	15,0%

3	2020 թ. Շուշիի հանձնումը	5,9%
4	Ավարայրի ճակատամարտը	3,9%
5	ԽՍՀՄ փլուզումը	3,4%
6	Արևմտյան Հայաստանի կորուստը	1,3%
7	Այլ	21,4%

Ճնշող մեծամասնությունը (74,4%), որպես ամենամեծ պարտություն է համարում 2020 թվականի 44-օրյա պատերազմը: Սրան ավելացնենք նաև 5,9% նրանց, ովքեր ամենամեծ պարտությունը համարում են Շուշիի հանձնումը: Նշենք, որ միայն 15%-ն է համարում 1915 թ. ցեղասպանությունն՝ որպես ամենամեծ պարտություն: Այս հարցում էլ տարիքային տարբերություններ կան: Այսպիսով ամենահաջող շրջանն էր Տիգրան Մեծի գահակալության ժամանակը (40 տարի), Սովետական շրջանը (70 տարի) և Հայկ Նահապետի հեռավոր պատմական ժամանակաշրջանը: Ստացվում է, որ մի քանի հազար տարիների պատմության մեջ միայն 120 տարին է համարվել ամենահաջող ժամանակ: Ընդ որում, որքան բարձր է հարցվողների տարիքը, այնքան շատ է Սովետական շրջանը հաջողված համարողների տոկոսը (48,5%):

Պատմական հիշողության հիմնական աղբյուրներն են առաջին հերթին՝ պատմության դպրոցական դասագրքերը, հանրակրթական միջնակարգ կրթության ծրագրերը, գեղարվեստական գրականությունը, առասպելներն ու ժողովրդական բանահյուսությունը, ինչպես նաև գեղարվեստական կինոֆիլմերը: Լայն զանգվածների պատմական հիշողության ձևավորման աղբյուր են հանդիսանում ընտանեկան պատմությունները, ընտանեկան ավանդույթներն ու լուսանկարները, փաստաթղթերը: Պատմական հիշողության խորությունը տարածվում է հայ ժողովրդի պատմության մինչև երկու հազար տարի: Պատմական հիշողության կառուցվածքը տարաբնույթ է, հատվածային ու մասնատված, մեծ բացերով ու պատմական որոշ ժամանակաշրջանների բացթողումներով: Պատմության որոշ դրվագներ միտումնավոր մոռացված են՝ ելնելով ներկա քաղաքական իրավիճակից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է ժամանակակից հայ հասարակության պատմական հիշողության առանձնահատկությունների ուսումնասիրությանը նվիրված համագգային ներկայացուցչական սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն: Ստացված էմպիրիկ տվյալ-

ների հիման վրա վերլուծվում են բնակչության հավաքական սոցիալական հիշողության պատմական խորությունը, կառուցվածքը և ազգային բնութագրերը:

Բանալի բառեր. Պատմական հիշողություն, հայ հասարակություն, սոցիոլոգիական ուսումնասիրություն:

СОБИРАТЕЛЬНЫЙ ОБРАЗ ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

Погосян Геворг

Академик НАН РА,

*доктор социологических наук, профессор,
Заведующий отделом социологии Института
философии, социологии и права НАН РА*

Погосян Рима

*Кандидат психологических наук, доцент,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В статье приводится анализ результатов общенационального репрезентативного социологического исследования, посвященного изучению особенностей исторической памяти современного армянского общества. На основе полученных эмпирических данных, подвергаются анализу историческая глубина, структура и национальные особенности коллективной социальной памяти населения.

Ключевые слова: историческая память, армянское общество, социологическое исследование.

COLLECTIVE IMAGE OF THE HISTORICAL MEMORY OF ARMENIAN SOCIETY

Poghosyan Gevorg

Full member of NAS RA,

Doctor of Sociological Sciences, Professor

Head of the Department of Sociology at the Institute

of Philosophy, Sociology and Law of NAS RA

Poghosyan Rima

Candidate of Psychological Sciences, Associate Professor,

Senior Researcher of the Institute of Philosophy,

Sociology and Law of NAS RA

SUMMARY

The article provides an analysis of the results of the nationwide representative sociological survey devoted to the study of the features of the historical memory of modern Armenian society. Based on the empirical data obtained, the historical depth, structure and national characteristics of the collective social memory of the population are analyzed.

Keywords: historical memory, Armenian society, sociological survey.